



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«08» 06 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 074 - 26

Նախաձեռնող՝

Քաղաքացի Երեմ Գրիգորյան
Երևան, Մաշտոցի 20/34

Գործունեությունը՝

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցում
Տավուշի մարզ Դիլիջան բնակավայրի Պարզ լճի փ. 26 հողամաս

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 074 - 26

« 08 » հունիսի 2026թ.

Դիլիջան բնակավայրի Պարզ լճի փողոց 26 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Քաղաքացի Երեմ Գրիգորյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ համալիր Դիլիջան բնակավայրի Պարզ լճի փողոց 26 հողամաս հասցեում: Գործունեության իրականացման համար նախատեսված տարածքը գտնվում է Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական վարժարանի անմիջական հարևանությամբ, ամենամոտ կառույցից 45 մ հեռավորության վրա, հողամասը հարակից է դեպի պարզ լիճ տանող ճանապարհին:

Հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված, գրանցված իրավունքի տեսակը՝ ընդհանուր բաժնային սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (<Օ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի:

Նկարագրական մաս. Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել 2024 թվականի հունվարի 11-ին Տավուշի մարզի Դիլիջան համայնքի կողմից տրված N Ա1-11 նախագծման թույլտվությունը, 2023 թվականի հունիսի 26-ի 11-003-0674-0061 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 26062023-11-0027 վկայականը:

Նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ համալիր՝ բաղկացած երկու մասնաշենքերից, որոնցից յուրաքանչյուրը կունենա 4 վերգետնյա և մասնակի մասնադրոշմի հարկեր: Բացի



բնակելի մասնաշենքերից հողի երեք նիշերից կենտրոնականի վրա կազմակերպված կլինի հասարակական նշանակության ժամանցի գոտի, փակ լողավազան, սրճարան, բիլիարդ: Մասնաշենքերում նախատեսված չեն նկուղային հարկեր: Շենքերի առաջին հարկերում նախատեսված են հասարակական նշանակության տարածքներ, խանութներ, խաղասենյակներ և սպասարկման համար նախատեսված այլ տարածքներ: Երկրորդ հարկերը նախատեսված է օգտագործել, որպես սեզոնային հյուրատներ, իսկ երրորդ և վերին հարկերը կճառայեն որպես բնակարաններ: Նախատեսվում է նաև լողավազան և հանգստի համար նախատեսված օժադակ շինություն: Համալիրը արտաքին սահմաններով նախատեսվում է պարսպապատել և ցանկապատել:

Կառուցապատման ենթակա տարածքում գնահատվել են հատման ենթակա ընդամենը 53 ծառ (32 հատ կաղնի 21 հատ բոխի): Հատման աշխատանքները, ինչպես նաև հետագա կանաչապատման և ծառատնկման աշխատանքները կկազմակերպվեն համայնքի հետ փոխհամաձայնեցված:

Համաձայն հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության, գործունեության իրականացման տարածքում կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ, կենդանատեսակներ չկան, տարածքում բնության, պատմության հուշարձանները բացակայում են, տարածքը ներառված է բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Նախատեսվող գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողամասի մակերեսը՝ 7901 մ²,
- կառուցապատման մակերեսը՝ 1990 մ² 25%
- կանաչ տարածքների մակերեսը՝ 4595 մ² 58%
- անջրանցիկ տարածքների մակերեսը՝ 710 մ², 8.9%
- ընդհանուր կառուցապատման մակերեսը 7390 մ²,
- ավտոկայանատեղիների քանակը՝ 87

Շենքը միաձույլ երկաթբետոնե շրջանակային հիմնակմախքով կառույց է, հատակագծում ուղղանկյունաձև: Կառույցն ունի 6 երկայնական(6.60x6) և 3 լայնական (6,60, 6,00,6,60) թռիչքներ: Հիմքի նախապատրաստական շերտն իրականացված է խամքարաբետոնով: Հիմքերը 300 մմ հաստությամբ միաձույլ երկաթբետոնե կողավոր սալ է: Հեծանները լայնական կտրվածքում ունեն 1000 մմx900մմ չափսեր: Սյուները, հեծանները, ծածկերը, աստիճանները միաձույլ երկաթբետոնից են: Ծածկի հաստությունը նախատեսված է 170 մմ:

Կառույցում օգտագործվող ամրանները A500C դասի են, իսկ բետոնը B25 դասի ծանր բետոն: Կառույցի պատերն իրենցից ներկայացնում են հիմնակմախքի լցաշար, ամրացված ճկուն կապերով: Շարվածքն ամրանավորված է և իրականացվում է թեթև բետոնից, սնամեջ բլոկներով:

Համալիրի առաջին հարկում նախատեսված են մեխանիկական դղմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածվող օդը տաքացվելու է ջրային օդատաքացուցիչի միջոցով: Ներածումն ու արտածումը կատարվելու է կարգավորող ճաղավանդակների միջոցով: Լողավազանի մասնաշենքում նախատեսված են մեխանիկական դղմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր:

Ջրամատակարարման արտաքին ցանցը միանալու է ընդհանուր միացման կետին և այնտեղից բերվելու է դեպի կառույց, որտեղից է միանալու է ներքին ցանցին և հակահրդեհային ջրամբարին: Լողավազանի ջրամատակարարման աղբյուր է հանդիսանալու նախագծվող տարածքային ջրագիծը: Բանվորական, անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքների և



ջրցանի համար նախատեսված ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից: Նախատեսվում է տեղադրել ուղղանկյունաձև հատակագծով, 5.15.0x2.15 մ չափսերով, 3.20 մ խորությամբ, 15մ³ օր տարողությամբ մաքրման կայան: Ջրահեռացումը կազմակերպված է: Կոյուղին միացվելու է համայնքային կոյուղատարին: Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական սարքավորումներից հեռացվելու են ներտարածքային ցանց:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աղբը՝ տարեկան 432մ³ ծավալով, կենցաղային աղբը տարեկան 144 մ³ ծավալով տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված վայր:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- աղմկոտ աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,
- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատվելու է,
- շինությունները ծածկվելու են շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը նախատեսվում է լվանալ,
- շինարարական աշխատանքների, փոշեռաջացման աշխատանքների ընթացքում իրականացվելու է ջրցան,
- շինարարական տեխնիկայի համար վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում, կամ սպասարկման կետերում,
- պարբերաբար ստուգվելու են շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և անհրաժեշտության դեպքում իրականացվելու է կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրվելու է, առաջացած թափոնները տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- շինարարական տեխնիկայի ընտրության ժամանակ հատուկ նշանակություն հատուկ ուշադրություն է դարձվելու դրանց աղմուկի մակարդակին,
- բոլոր մեքենաները ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների (փոշի, CO, Nox և այլն) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,



-ստագործված մեքենայական յուղերով և քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

-աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

-շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ՝ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի, կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանը:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Դիլիջան բնակավայրի Պարզ լճի փողոց 26 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանում, որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Տավուշի մարզպետարանը, Դիլիջանի համայնքապետարանը, որոնց կողմից ստացված կարծիքները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ, որոնք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Դիլիջան բնակավայրի Պարզ լճի փողոց 26 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքների համար փորձաքննության ընթացքում դիտարկվել են և ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվել են շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները և բավարար մեղմացնող միջոցառումները: Բազմաֆունկցիոնալ համալիրը ենթակա է պետական համալիր փորձաքննության, որի ժամանակ կտրամադրվեն համապատասխան դիրքորոշումները:

Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է գործունեությունն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելուց հետո՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920 որոշման սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

2. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:



3. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
4. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Դիլիջանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
6. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
7. Ծառահատման, կանաչապատման և ծառատնկման աշխատանքներն իրականացնել «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի հետ համաձայնեցված, ապահովել նվազագույնը 50% կանաչապատման մակերես (ներառյալ բնական լանդշաֆտը):
8. Գործունեություն իրականացնելիս հաշվի առնել «Դիլիջան» ազգային պարկի պահպանման գոտու ռեժիմի առանձնահատկությունը, պահպանել ազգային պարկի սահմանային գոտին:
9. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Երեմ Գրիգորյանի կողմից Դիլիջան բնակավայրի Պարզ լճի փողոց 26 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան